

Ռոտավիրուս (Ստամոքսաղիքային մանրէ) Պատվաստը

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԴՈՒՔ ԻՄԱՆԱՔ

Many Vaccine Information Statements are available in Spanish and other languages. See www.immunize.org/vis.
Պատվաստի Մասին Շատ Տեղեկություններ Կան Իսպաներենով Եւ Այլ Լեզուներով: Տես www.immunize.org/vis:

1 Ի՞նչ է ռոտավիրուսը:

Ռոտավիրուսը մանրէ է, որը պատճառում է լուծ (երբեմն ծանր), մեծ մասամբ մանուկների եւ երեխաների մոտ: Դա հաճախ ուղեկցվում է լուծով եւ ջերմությամբ եւ կարող է առաջացնել ջրազրկում:

Ռոտավիրուսը լուծ առաջացնող միակ պատճառը չէ, բայց դա լրջագույններից մեկն է: Մինչ պատվաստը, ռոտավիրուսի պատճառով արձանագրվել են.

- ավելի քան 400.000 այցելություն բժշկին,
- ավելի քան 200.000 այցելություն շտապ օգնության սենյակ,
- 55.000-ից մինչեւ 70.000 հոսպիտալացում եւ
- 20-60 մահ յուրաքանչյուր տարի Միացյալ Նահանգներում:

Միացյալ Նահանգներում գրեթե յուրաքանչյուր երեխա իր 5-րդ տարեդարձից առաջ վարակվում է ռոտավիրուս մանրէով:

2 Ռոտավիրուս պատվաստը

Ավելի լավ հիգիենան եւ ախտահանումը Միացյալ Նահանգներում շատ չեն նվազեցնում ռոտավիրուսի հետեւանքով առաջացած լուծը: **Ձեր երեխային ռոտավիրուս հիվանդությունից պաշտպանելու լավագույն միջոցը ռոտավիրուս պատվաստն է:**

Ռոտավիրուս պատվաստը ընդունվում է բերանի միջոցով (կուլ տալով). դա սրսկում չէ:

Ռոտավիրուս պատվաստը չի պաշտպանի այլ բացիներից առաջացած լուծից կամ փսխելուց, բայց դա շատ լավ կպաշտպանի ռոտավիրուսից առաջացած լուծից եւ փսխելուց: Երեխաների մեծ մասը, ով ստացել է ռոտավիրուս պատվաստը, ընդհանրապես լուծ չի ունենա, եւ նրանք գրեթե բոլորը պաշտպանված կլինեն ռոտավիրուսի **ծանր** լուծից:

Միացյալ Նահանգներում ռոտավիրուս պատվաստը օգտագործվում է 2006 թվականից սկսած: 2010 թվականին դա մոտավորապես 85 տոկոսով նվազեցրել է ռոտավիրուս հիվանդությունից շտապ օգնության բաժանմունքի խնամքի կամ հոսպիտալացման կարիք ունեցող մանուկների եւ երեխաների քանակը:

3 Ո՞վ պետք է ստանա ռոտավիրուս պատվաստ եւ ե՞րբ:

Կա երկու տեսակի ռոտավիրուս պատվաստ: Երկուսն էլ արդյունավետ են:

Ձեր երեխան կարող է ստանալ 2 կամ 3 չափաբաժին, նայած թե որ տեսակն է օգտագործվում: Ձեր բժիշկը ձեզ կասի, թե ձեր երեխան որ տեսակը պետք է ստանա:

Չափաբաժինները հանձնարարվում են հետեւյալ տարիքներում.

Առաջին չափաբաժինը՝ 2 ամսական հասակում
Երկրորդ չափաբաժինը՝ 4 ամսական հասակում
Երրորդ չափաբաժինը՝ 6 ամսական հասակում (եթե անհրաժեշտ է):

Առաջին չափաբաժինը կարող է տրվել մինչեւ 6 շաբաթական հասակը եւ պետք է տրված լինի 14 շաբաթական եւ 6 օրական հասակում: Վերջին չափաբաժինը պետք է տրվի մինչեւ 8 ամսական հասակը:

Ռոտավիրուս պատվաստը կարող է տրվել մանկական մյուս պատվաստների հետ միասին:

4 Որոշ մարդիկ պետք չեն ստանան ռոտավիրուս պատվաստ կամ պետք է սպասեն:

- Այն երեխան, ով ռոտավիրուս պատվաստից վտանգավոր (կյանքը վտանգող) հակազդեցություն է ունեցել, պետք չէ ստանա այլ չափաբաժին: Այն երեխան, ով ռոտավիրուս պատվաստի բաղադրիչների նկատմամբ վտանգավոր հակազդեցություն ունի (կյանքը վտանգող), պետք չէ պատվաստ ստանա: Ասեք ձեր բժշկին, եթե ձեր երեխան ձեզ հայտնի որեւէ վտանգավոր ալերգիա ունի, ներառյալ լատեքսի նկատմամբ ծանր ալերգիա:
- Այն երեխաները, որոնք ունեն "անընկալունակության համակցված պակաս" (SCID) պետք չէ ստանան ռոտավիրուս պատվաստը:
- Թեթեւ հիվանդություն ունեցող երեխաները սովորաբար կարող են ստանալ պատվաստը: Միջակ կամ ծանր հիվանդ երեխաները պետք է հավանաբար սպասեն մինչեւ առողջանալը: Սա ներառում է այն երեխաներին, ովքեր միջակ կամ ծանր աստիճանի լուծ կամ փսխուկ ունեն: Հարցրեք ձեր բժշկին կամ հիվանդապահին:

- Հարցրեք ձեր բժշկին, եթե ձեր երեխայի իմունային համակարգը տկարացած է հետեւյալ պատճառներով.
 - HIV/AIDS, կամ որեւէ այլ հիվանդություն, որն ազդում է իմունային համակարգի վրա
 - Բուժում դեղահատերով, ինչպես՝ երկարաժամկետ ստերոիդները
 - Զարգկեղ կամ քաղցկեղի բուժում ճառագայթումով կամ դեղահատերով
- Աւելի ծանոթացե՛ք ձեր բժշկին, եթե ձեր երեխան երբեւէ ունեցել է աղիքի ոլորում, որը բուժվել է հիվանդանոցում:

5 Որո՞նք են ռոտավիրուս պատվաստից սպասվող վտանգները:

Պատվաստը որեւէ այլ դեղամիջոցի նման կարող է լուրջ բարդություններ առաջացնել. ինչպես, օրինակ, ծանր ալերգիկ հակազդեցություններ: Որեւէ պատվաստի լուրջ վնասվածք կամ մահ պատճառելու վտանգը չափազանց փոքր է:

Պորսին սիրքովիրուս կոչված մանրէն (կամ նրա բաղադրիչները) առկա է ռոտավիրուսի երկու տեսակի պատվաստներում: Որեւէ ապացույց չկա, որ այս մանրէն վտանգավոր է կամ հիվանդություն է առաջացնում մարդկանց մոտ: Հավելյալ տեղեկությունների համար այցելեք <http://www.cdc.gov/vaccines/vpd-vac/rotavirus> կայքը:

Ռոտավիրուս պատվաստ ստացող երեխաների մեծ մասը որեւէ խնդիր չի ունենում:

Թեթեւ բարդություններ

Երեխաները կարող են դառնալ ջղազրգիռ կամ կարող են ունենալ թեթեւ ժամանակավոր փորհարություն կամ փսխուկ ռոտավիրուս պատվաստի յուրաքանչյուր չափաբաժին ստանալուց հետո:

Լուրջ բարդություններ

Որոշ հետազոտություններ բացահայտել են աղիքի ոլորման դեպքերի որոշ աճ՝ այս պատվաստը ստանալուց հետո մեկ շաբաթվա ընթացքում: Աղիքի ոլորումը աղիքի խցանման մի տեսակ է, որը բուժվում է հիվանդանոցում: Որոշ դեպքերում կարող է հանձնարարվել վիրահատություն: Հաշվարկված վտանգը 100.000 երեխայից մեկն է:

6 Ինչ՞ էթե միջին կամ ծանր հակազդեցություն կա.

Ի՞նչ պետք է անեմ.

Առաջին չափաբաժինը ստանալուց մեկ շաբաթվա ընթացքում, նայեք **ստամոքսի ցավի** երեւույթներ ուղեկցված ծանր լացով (որը կարող է կարճատեւ լինել), մի քանի **փսխելու դեպք**, կամ **կղկղանքի մեջ արյուն**: Ձեր երեխան կարող է **թույլ** լինել կամ շատ ջղազրգիռ:

Հետեւեք որեւէ անսովոր վիճակի, ինչպես՝ ծանր ալերգիկ հակազդեցություն կամ բարձր ջերմություն: Եթե ծանր ալերգիկ հակազդեցություն լինի, դա կարող է պատահել պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչեւ մեկ ժամվա ընթացքում: Ծանր ալերգիկ հակազդեցության ախտանշանները ներառում են **դժվար շնչառություն, թուլություն, խռպոտություն** կամ **խոխոց, սրտի արագ բաբախում, ցան, շմամություն, գունատություն** կամ **կոկորդի այտուց**:

Ես ի՞նչ պետք է անեմ:

- Չանգեք բժշկին, կամ տվյալ անձին անմիջապես բժշկի տարեք:
- Աւելի բժշկին ինչ է պատահել, դեպքի օրը եւ ժամանակը եւ պատվաստումը երբ է կատարվել:
- Խնդրեք ձեր խնամատարին, որպեսզի հակազդեցության մասին տեղեկագրի՝ լրացնելով Պատվաստի Հակազդեցության Դեպքերի Տեղեկագրման Համակարգի (Vaccine Adverse Event Reporting System, VAERS) ձեւ: Կամ դուք կարող եք տեղեկագիրը գրանցել VAERS կայքում www.vaers.hhs.gov հասցեով կամ զանգել **1-800-822-7967** համարով:

VAERS-ը բժշական խորհուրդներ չի մատակարարում:


7 Պատվաստի Վնասների Հատուցման Պետական Ծրագիր

Պատվաստի Վնասների Հատուցման Պետական Ծրագիրը (National Vaccine Injury Compensation Program, VICP) ստեղծվել է 1986-ին:

Այն մարդիկ, որոնք կարծում են, որ իրենք վնասվել են պատվաստից, կարող են բողոքագիր ներկայացնել VICP, զանգահարելով **1-800-338-2382** հեռախոսահամարով կամ այցելելով նրանց կայքը www.hrsa.gov/vaccinecompensation հասցեով:

8 Ինչպե՞ս կարող եմ ավելի տեղեկություն ունենալ:

- Հարցրեք ձեր բժշկին: Նրանք կարող են ձեզ տալ պատվաստի փաթեթի ներդիրը կամ առաջարկել տեղեկության այլ աղբյուրներ:
- Չանգեք ձեր տեղական կամ նահանգային բաժանմունք:
- Կապվեք Հիվանդությունների Կառավարման եւ Կանխարգելման Կենտրոնների հետ (CDC).
 - Չանգեք **1-800-232-4636** (1-800-CDC-INFO) կամ
 - Այցելեք CDC-ի Պատվաստի Ազգային Ծրագիր կայքը՝ www.cdc.gov/vaccines



U.S. DEPARTMENT OF HEALTH AND HUMAN SERVICES
CENTERS FOR DISEASE CONTROL AND PREVENTION

Vaccine Information Statement (Interim)
Rotavirus IMM-661ARM – Armenian (12/6/2010) 42 U.S.C. §300aa-26
Translated by Transcend Translations, Davis, CA www.transcend.net